№ 61 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 18 1901 ԿԻՐԱԿԻ ՄԱՐՏԻ 18 № 61

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվան 6 րուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարւում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պարսից Շահի նոր շնորհը հայերին.—Անբերրիութիւնից վնասվածների օգտին. Հայոց ներկայացումները. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—Մանրանկար. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Արձակ բանաստեղծութիւններ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԻՑ ՇԱՀԻ ՆՈՐ ՇՆՈՐՀԸ ՀԱՅԵՐԻՆ

—

Ինչպէս եւ պէտք էր սպասել, Մուզաֆֆէր-Էդդին Շահի անցեալ տարվայ նոյեմբեր ամսին հրատարակած ֆիրմանը, որով իր շահնշահեան բարձր հովանաւորութեան ներքոյ է առնում պարսկահայերի ժողովրդական կրթական գործը, ընդհանուր ուշադրութիւն գրաւեց իր վրա ոչ միայն Պարսկաստանում, այլ եւ Եւրոպայում։ Եւրոպական մամուլը տպագրեց այդ ֆիրմանի թարգմանութիւնը, առնելով «Մշակից», եւ նոյն իսկ քաղաքական մեծ կարեւորութիւն տուեց նրան, ի նկատի ունենալով, որ Իրանի ինքնակալի արտայայտած համակրութիւնը հայոց դպրոցական գործին տեղի ունեցաւ անմիջապէս Կ. Պօլսի այցելութիւնից յետոյ, ուր Շահը բարեկամական առաջարկ ստացաւ իրան Իսլամի խալիֆ համարող սուլթանից՝ հալածել հայերին ի փառս եւ ի պարծանս իսլամութեան եւ զսպել նրանց ձգտումները, անշուշտ, քաղաքակրթական, քանի որ Շահը հարկ համարեց խրախուսել հայերի հէնց այդ ձգտումն իր նշանաւոր ֆիրմանով։ Եւ այդ ֆիրմանը ստորագրվում էր այն րոպէին, երբ Կ. Պօլսի թիւրք լրագիրները, իբրեւ մեծ յաղթանակ խալիֆի, աւետում էին, թէ Շահը հրամայել է թիւրք լեզուի ուսուցումը պարտադիր անել բոլոր պարսիկ դպրոցներում եւ թիւրք օֆիցէրներ հրաւիրել պարսկական զօրքը կրթելու եւ վարժելու համար, եւրոպացի եւ ռուս կրթիչների ու վարժողների փոխարէն,—երկու բան, որոնք գոյութիւն ունեն միայն թիւրք խմբագիրների երեւակայութեան մէջ, որովհետեւ դեռ մինչեւ այսօր այդ մտքով ոչ եւ է ֆիրման չէ հրատարակված եւ պարսից զօրքը շարունակում է կրթվել ու վարժվել աւստրիացի եւ, գլխաւորապէս, ռուսաց օֆիցէրների ղեկավարութեամբ, իսկ Շահը ոչ միայն ցոյց չէ տալիս հայատեցութեան որ եւ է նշան, այլ, ընդհակառակն, այս օրերս հայասիրութեան մի նոր ապացոյց եւս տուեց իր մի նոր ֆիրմանով։

Այս տարվայ յունվարի 27-ին ես ստացայ Թավրիզից, Հայուհեաց Բարեգործական ընկերութեան վարչութիւնից, մի գրութիւն, որով յարգելի վարչութիւնը յայտնում էր, թէ երբ անցեալ տարի նոյեմբերին Շահը, Եւրոպայից վերադառնալիս, մի քանի օր մնաց Թավրիզում, վարչութիւնը պատիւ ունեցաւ Հայուհեաց Բարեգործական ընկերութեան կողմից աշակերտուհիների պատրաստած մի քանի ձեռագործները նուիրել Նորին Մեծութեան, ինչպէս եւ սադրազամին։ Շահը բարեհաճեց 100 թուման նուիրել ընկերութեան, իսկ սադրազամը, յայտնելով իր համակրութիւնը ընկերութեան, հրամայեց ուղարկել իրան մի ամփոփ տեղեկագիր ընկերութեան նպատակի, կազմակերպութեան եւ գործունէութեան մասին, վեհափառ Շահին ներկայացնելու համար։ Արդ, վարչութիւնը՝ ուղարկելով ինձ այդ տեղեկագիրը, պատրաստված պարսկերէն, խնդրում էր ինձ վերոյիշեալ գրութեամբ՝ ներկայացնել ընկերութեան կողմից այդ տեղեկագիրը սադրազամին եւ խնդրել, որ Նորին բարձրութիւնը խնդրի Շահից ընդունել իր հովանաւորութեան ներքոյ Թավրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը եւ շնորհել ֆիրման այդ մասին։ Անմիջապէս, պատրաստելով խնդրագիր յանուն Աթաբէկ-Ազամի (սադրազամի այժմեան նոր տիտղոսն է) եւ կցելով նրան տեղեկագիրը, ես դիմեցի արտաքին գործերի մինիստր Մուշիր-Դօվլէին եւ խնդրեցի միջնորդել Աթաբէկ-Ազամի առաջ, որ Նորին բարձրութիւնը բարեհաճի ներկայացնել տեղեկագիրը Նորին Մեծութիւն Շահին եւ խնդրէ իր բարձր հովանաւորութեան ներքոյ առնել ընկերութիւնը։ Արտաքին գործերի մինիստր ծերունի Մուշիր-Դօվլէն եւ նրա աւագ որդին երիտասարդ Մուշիր-Մուլքը, որ վարում է մինիստրի կաբինէտի տեսչի պաշտօնը (նա աւարտել է իր ուսումը Մօսկվայի համալսարանի իրաւաբանական ֆակուլտէտը), մեծ համակրութեամբ վերաբերվելով խնդիրքիս, խոստացան չը խնայել իրանց աջակցութիւնը։ Երկրորդ օրը խնդրագիրը եւ տեղեկագիրը յանձնվեցին Աթաբէկ-Ազամին, որ Մուշիր-Մուլքի միջոցով մի քանի լրացուցիչ տեղեկութիւններ պահանջեց Հայուհեաց Բարեգործական ընկերութեան գործունէութեան մասին, որոնք եւ հայթայթվեցին։

Եւ ահա երկու օր առաջ իմ բարեկամ Յովհաննէս Խան-Մասեհեանցը յայտնեց ինձ Մուշիր Դօվլէի կողմից, որ վեհափառ Շահը հաճութեամբ ընդունել եւ կարդացել է տեղեկագիրը եւ, ի նշան իր արքայական խնամքի ու հոգածութեան առ հայ ժողովուրդը, բարեհաճել է իր բարձր հովանաւորութիւնը շնորհել Հայուհեաց Բարեգործական ընկերութեան. մի եւ նոյն ժամանակ Յովհաննէս խանը յանձնեց ինձ եւ ֆիրմանը, որի ճիշդ թարգմանութիւնը, վաւերացրած Յովհաննէս խանի, իբրեւ Շահի պաշտօնական թարգմանի, կողմից, հետեւեալն է.

«Ամենակարող Աստուծով, ծագեց յաղթութեան եւ փառքի աստղը եւ ամենակալի օգնութեամբ շահութեան կնիքը ստացաւ Մուզաֆֆէր-Էդդին-Շահն. ըստ որում մեր արքայական իղձերն միշտ նուիրված են եղել բարեգործական նպատակների բարգաւաճմանը, եւ միշտ խրախուսել ենք այդ տեսակ ձեռնարկները, ուստի իբրեւ ապացոյց մեր կայսերական համատարած շնորհների դէպի այս հզօր կառավարութեան համայն հպատակները՝ այս առթիւ, երբ Թավրիզի հայ կանանց բարեգործական ընկերութիւնը դիմել է մեզ խնդրելով ընդունել նոյն ընկերութիւնը մեր հովանաւորութեան ներքոյ, սոյն շահնշահական սիրաբուղխ հրովարտակով՝ առնում ենք նոյն ընկերութիւնը մեր հովանաւորութեան ներքոյ, եւ մեր մասնաւոր շնորհին ու բարձր հոգածութեան առարկայ ենք դարձնում։ Տրված Շէվվալ ամսում 1318 թուականին»։

Ֆիրմանը կրում է նաեւ Աթաբէկ-Ազամի եւ Մուշիր-Դօվլէի կնիքները։

Պէտք է ասեմ, որ այս առաջին անգամն է, որ մի բարեգործական ընկերութիւն Պարսկաստանում արժանանում է գահի հովանաւորութեան։ Եւ երբ Մուզաֆֆէր-Էդդին Շահը, Պարսկաստանի հայ ժողովրդի կրթական գործը քաջալերելուց յետոյ, այսօր խրախուսում է նաեւ նրա բարեգործական ձեռնարկութիւնները, յոյս ունենք, որ Թավրիզի Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը աւելի եռանդ ցոյց կը տայ եւ աւելի օգտակար կը հանդիսանայ իր գործունէութեան մէջ։

Այստեղ պէտք է յիշեմ եւ վեհափառ Շահի մի այլ շնորհը՝ Թավրիզի հայոց Արամեան դպրոցին։ Ինչպէս յայտնի է, 1889 թւին տեղի ունեցած խռովութիւնների պատճառով, ծխախոտի ռէժիի առիթով, Պարսից կառավարութիւնը 500,000 անգլիական լիրա պարտքի տակ էր ընկել եւ հանգուցեալ Նասրէդդին Շահի կարգադրութեամբ, այդ պարտքը հանգցնելու համար, բոլոր ռոճիկներից եւ թոշակներից 20% պակասեցնում էին։ Որովհետեւ Թավրիզի հայոց դպրոցները տարեկան 200 թուման նպաստ էին ստանում, ուստի նրանց տրվում էր միայն 160 թուման։ Արդ, Արամեան դպրոցի հոգաբարձութիւնը մի քանի ժամանակ առաջ ուղարկեց ինձ մի խնդրագիր, որ ես ներկայացնեմ Աթաբէկ-Ազամի միջոցով վեհափառ Շահին եւ խնդրեմ, ինչպէս Թավրիզում գտնված ժամանակ խոստացել է, որ դպրոցի նպաստը չը զեղչվի եւ 200 թումանը ամբողջութեամբ վճարվի։ Երէկ, մարտի 7-ին, ես ստացայ մի նամակ Մուշիր-Մուլքից, որով յայտնում է, թէ՝ «Արեգնափայլ Շահընշահը հրամայել է ոչ միայն ամբողջովին վճարել այսուհետեւ հայոց դպրոցի նպաստը, 200 թուման, արքունի գանձարանից, այլ եւ վերադարձնել դպրոցին վերջին երկու տարվայ այն է 1899 եւ 1900 թ. զեղչը—80 թուման, ի նկատի ունենալով, որ ռէժիի պարտքը երկու տարի առաջ է վճարվել»։ Մի եւ նոյն ժամանակ Մուշիր-Մուլքը ուղարկել է ինձ 80 թումանի բարաթ, կնքված եւ վաւերացրված Շահից։

Հ. Առաքելեան

ԱՆԲԵՐՐԻՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացանք կարօտ ախալքալաքցիների օգտին՝ Բալախանի Բ. Ռաֆայէլեանից 5 րուբլի, Պլօցկի նահանգի Րըպին քաղաքից մի տիկնոջից 3 րուբլի. ընդամենը 8 րուբլի։ Նախկին նուիրատուութիւնների հետ միասին՝ մեր խմբագրութեան մէջ կայ 1917 րուբլի 64 կոպէկ։

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

—

Հայ դերասանական խմբի վերջին ներկայացումը շատ բաւարար տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա։ Վերջապէս հանդիսականների առաջ դրվեց մի պիէս, որտեղ խօսում է իրական կեանքը իր ցաւ ու հոգսերով եւ իր կնճռոտ հարցերով։ Տրվեց Նեմիրովիչ-Դանչենկօի «Կեանքի արժէքը» պիէսը։ Այն թերութիւնները եւ թոյլ կողմերը, որ ունի այդ պիէսը, այդ օրը մոռացութեան մատնվեցին, որովհետեւ պիէսը ինքն ըստ ինքեան մի նորութիւն էր, կլասիկական միօրինակ ներկայացումներից յետոյ դա կեանքի մի հետաքրքրական խորշի նկարագիրն էր։ Մասնակցում էին հին եւ նոր դերասաններ եւ դերասանուհիներ։ Հանդէս էին բերված զանազան տեսակ տիպեր։

Այս անգամ Պետրոսեան տուեց մեզ Դանիէլ Դեմուրինի տիպը կենդանի գծերով։ Դեմուրին փայտեայ ճառախօս չէր, այլ մարդ էր, որի մէջ խօսում էին եւ պատուազգացութիւնը, եւ խանդոտութիւնը, եւ գործնական խելացիութիւնը, եւ բարեսրտութիւնը։ Պետրոսեանը խօսում էր, այլ ոչ ճոռոմաբանում։ Դերասանը պէտք է աշխատի սակայն պահպանել ձայնի մաքրութիւնը յուզված րոպէներում եւ չը խօսի խռպոտ ձայնով։

Տիկին Սիրանոյշ Դանիէլ Դեմուրինի կնոջ դերում ցոյց տուեց կեանքից անբաւական, բայց մի եւ նոյն ժամանակ կեանքից տանջված մի կին, որ շեղվել է կեանքի սովորական շաւղից եւ չէ կարողանում ելք գտնել իր եւ շրջապատող հանգամանքների ստեղծած կենսական ցանցից։ Տիկին Սիրանոյշ շատ էր տուել իր դերին

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐՁԱԿ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱԶԻՄԻՐ ՏԵՏՄԱՅԵՐԻ

«Մելամաղձութիւն» շարքից

I Ստուեր

—

Մարդուս ամեն տեղ հետեւում է մի ստուեր. նա երբէք չէ բաժանվում նրանից, ոչ ցերեկը, ոչ գիշերը։ Յաճախ մարդ նայում է նրա վրա, բայց չէ տեսնում այնպէս, ինչպէս մարդ չէ տեսնում այն տան առաջ բուսնող ծառերը, ուր վաղուց ի վեր ապրում է, այնպէս, ինչպէս փողոցում մարդ չէ տեսնում անցորդներին, եթէ վերացած է լինում մտքով։

Եւ այդ ստուերը հետեւում է մարդուն ամեն րոպէ—եւ՛ այն ժամանակ, երբ նա, դեռ մանուկ, փարում է մօր ստինքին, եւ՛ այն ժամանակ, երբ նա նայում է՝ կրքոտ դրկախառնութեան մէջ հալվող կնոջ կիսախուփ աչքերին ու փնտռում նրանց մէջ ամօթ եւ ամօթից էլ աւելի զօրեղ ցանկութիւն, եւ՛ այն ժամանակ, երբ նա նայում է գարնանային դալարին ու մտածում է, թէ գուցէ միւս գարնան արդէն դալար բուսած կը լինի իր գերեզմանի վրա։

Գիշեր ու ցերեկ, միշտ եւ ամեն տեղ, երջանկութեան փափագից էլ աւելի հաստատուն, հետեւում է մարդուն ստուերը։ Մահն է այդ ստուերը։

II Վարդը

Ես կանգնած էի Նիցցայում ծովափին, ձեռքումս բռնած մի վառ կարմիր վարդ։

Իմ առաջ փռված էր ծովը, ոսկեշող—երկնագոյն, արծաթափայլ—մանիշակագոյն, հանդարտ, արեւառ ծովը—արեւալից կէսօրին։

Ծովեզրեայ ալիքի փողփողուն մարգարիտը, զմրուխտը եւ յասպիսը վազէվազ մօտենում էին իմ ոտներին, միակերպ եւ չափական աղմուկ հանելով, ինչպէս տաւիղը, երբ մատով խփում ես մի եւ նոյն լարին։

Ոսկեփայլ—կապտագոյն անամպ երկնքում կանգ էր առել ահագին բոցավառ արեգակը։ Գարուն էր։

Ծովի երեսին ճախրում էին մի քանի սպիտակ ճայեր. նրանք մերթ լանջերով շօշափում էին ջուրը, մերթ բարձրանում վերեւ. այդպէս են թռչում թիթեռները մարգագետնում։

Հեռուում, արեւելքում, անցնում էր մի շոգենաւ. նա քաշում էր իր ետեւից ծուխի մի գորշ շերտ եւ կամաց-կամաց անհետանում ծովի անապատի մէջ։

Ջուրը գցեցի վարդս։

Ալիքը յետ վազեց եւ տարաւ հետը իմ վարդը։

Ես տեսնում էի, թէ ինչպէս հեռանում էր նա,—առաջ վառ կարմիր՝ սատաֆագոյն փրփուրի մէջ, իսկ յետոյ աւելի ու աւելի դըժգոյն՝ ծովի զմրուխտագոյն մակերեւոյթի վրա։

Բայց մի քանի վայրկեան անց՝ նա ալիքի հետ յետ դարձաւ իմ ոտների մօտ։

Ես նկատեցի, որ մի քանի թերթիկներ, որոնք հոսանքի ոյժից պոկվել էին ծաղկից, առանձին յետ եկան։

Իսկ ալիքը յետ գնաց ու յետ տարաւ իմ վարդը, եւ, մի վայրկեան անց, ծաղիկը դարձեալ իմ ոտների մօտ էր՝ յետ դարձած ալիքի հետ։

Միայն թէ այս անգամ աւելի եւս մեծ թւով պոկված թերթիկներ ջոկ ջոկ յետ եկան։

Ես երկար կանգնած էի ծովափին,—ալիքը մօտենում էր ինձ ու յետ գնում, բերելով իմ ոտների մօտ հետզհետէ աւելի ու աւելի փոքրացած վարդի ծաղիկը եւ աւելի ու աւելի մեծ թւով պոկված թերթիկներ։

Եւ, վերջապէս, ոչինչ չը մնաց վարդից, բացի մի խումբ ջրի երեսին շաղ եկած թերթիկներից։

Իսկ ծովը հա բերում էր այդ թերթիկները դէպի ինձ, հա բերում...

Այդպէս չէ լինում եւ մարդուս սիրտը։ Վերջ ի վերջոյ նա սահելով մօտենում է մեր ոտներին, բաժան բաժան եղած մի խումբ թերթիկներին։

III Վէզուվի վրա

Ես կանգնած էի գարնանը Վէզուվի գագաթին եւ նայում էի ծովին։

Արեւը մայր էր մտնում։ Անուրջի նման մարմանդ ալիքը փողփողում էր ոսկու, ծիրանիի եւ յակինթի գոյներով։

Մարգարիտ որսողների հանդիստ ու անշարժ նաւակները սպիտակին էին տալիս իրանց առագաստներով, ջրի վրա թեքված, ինչպէս լճի երեսին փթթած նունուֆարներ։

Դիւթական խաղաղութիւն էր տիրում։ Հեռուում, կարմրին տալով վերջալոյսի շողքերում, երեւում էր Նէապոլը, իսկ այնտեղ, մինչեւ Ելիսեան Դաշտերը, մթնշաղի մշուշի միջով մտախոհ կերպով կապոյտին տալով, ձգվում էր հողի շերտը։ Կապրեան ժայռը բարձրանում էր լճի վրա, փոքր ինչ վարդագոյն եւ սքողված երկարաձիգ ստուերով. Սորրէնտօյի եւ կրաւորական բնաւորութիւն եւ ամբողջապէս արտայայտւեց իր իսկական ոյժով միայն այն տեսարանում, երբ նրա ամուսինը բարձրաձայն կարդում է կնոջ սիրահարի նամակը։

Տիկին Մայսուրեանին մենք առաջին անգամ ենք տեսնում մեր բեմի վրա։ Տիկինը ունի բեմական անկասկածելի ընդունակութիւններ։ Պահում է իրան ազատ, աշխատում է թափանցել իր դերի մէջ։ Արտասանում է հայերէն բաւական աջող։ Աւելի կատարելութեան համար նա պէտք է աշխատէ նախադասութիւնների եւ բառերի վերջերը չուտել, այլ արտասանել լիակատար կերպով։

Տիկին Զմշկեան Դեմուրինի մօր դերում կատարում էր իր դերը թեթեւ, արտասանում էր աջող եւ տուեց մի ինքնատեղծ տիպ, որը սակայն նման չէր պիէսի ենթադրեալ ռուս կնոջ տիպին։

Աղայեան գործարանի կառավարչի դերը կարողացել էր որոշ տիպի վերածել, բայց նրան զրկել էր հասակաւոր եւ կրթված մարդու լըրջութիւնից։

Յարութիւնեան Սօլօնչակովի դերում ներկայացրեց մեզ ոչ փիլիսօփայի եւ գրագէտի, ինչպէս թելադրում է պիէսը, այլ հրասթափված եւ կեանքի վրա սկեպտիկ կերպով նայող մի պառաւ ամուրիի։ Դերասանի դէմքը շատ էր ջահել, մինչդեռ նա պէտք է ներկայացնէր 40 տարեկան մարդու։

Պ. Յ. Զմշկեան կատարեց Մօրսկոյի դերը շատ միօրինակ եւ առանց դէմքի շարժումի։ Օր. Զմշկեան կատարեց մանկաբար Վարիա Դեմուրինի դերը։

Վերջումը տուին «Մկնիկ» զաւեշտը, որ ծիծաղացրեց հասարակութիւնը։

Հասարակութիւնը այս անգամ գոհ սրտով հեռացաւ թատրոնից։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Կովկասեան ցուցահանդէսի կարգադրիչ յանձնաժողովը, ստանալով ցուցահանդէսի թոյլտւութեան հեռագիրը, սկսել է ամենաեռանդուն կերպով աշխատել։ Շուտով կը սկսվի շինութիւնների կառուցումը։ Ցուցահանդէսին մասնակցել ցանկացողները կարող են դիմումներ անել թէ տեղ խնդրելու եւ թէ յատուկ պավիլիօններ շինելու համար։

—

Երէկ, շաբաթ օր, մարտի 17-ին, Թիֆլիսում տեղի ունեցաւ ռուս գրող Իվանովիչի թաղումը։ Յուղարկաւորութեանը ներկայ էին հանգուցեալի ազգականները, բարեկամները, բազմաթիւ յարգողներ եւ մամուլի ներկայացուցիչները։ Մարմինը թաղեցին Կուկիայի ուղղափառ գերեզմանատանը։ Դրված էին պըսակներ յարգողների կողմից։

—

Պարսկաստանից մեզ գրում են, որ Մաղաքիա եպիսկոպոսը շուտով հեռանալու է Թեհրանից եւ ընդմիշտ Պարսկա-Հնդկաստանի թեմից։ Թէպէտ թեմը առաջնորդից չօգտվեց, բայց ինքը՝ բարեխնամ սրբազանը՝ թեմից օգտվեց... Կարծում ենք, գոհ սրտով է հեռանում»։

—

Պետերբուրգի լրագիրները հաղորդում են, որ մարտի 9-ին երկաթուղու առաւօտեան մարդատար գնացքով ճանապարհ ընկան Ցարսկօէ-Սելօ ֆինանսների եւ արդարադատութեան մինիստրները, իսկ առանձին գնացքով պետական խորհրդի անդամ Ն. Վ. Վաննովսկի եւ ներքին գործերի, զինւորական, երկրագործութեան, հաղորդակցութեան ճանապարհների մինիստրները, ս. սինօդի օբերպրօկուրօր Պօբէդօնօսցէվ եւ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ Ն. Զվերէվ։

—

Վարշավայի համալսարանը ստացել է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնից առաջարկութիւն՝ յայտնելու համալսարանական խորհրդի կարծիքը, թէ կարելի՞ է արդեօք քննութեան ենթարկել եւ աւարտման վկայական տալ այնպիսի կողմնակի անձանց, որոնք մինչեւ անգամ ազատ ունկնդիր չեն եղել համալսարանում։

—

Մեզ հաղորդում են, որ Գէորգ Բաղդասարեան անունով մի արհեստաւոր գործի ժամանակ կտրել է աջ կուռը, որով եւ զրկվել է աշխատելու ընդունակութիւնից։ Անօգնական մնացած աշխատողը այժմ դիմում է հասարակութեան գթասրտութեան, խնդրելով օժանդակութիւն։ Խեղճը առողջանալուց յետոյ պէտք է սկսի գործել ձախ ձեռքով, իսկ մինչեւ այն կարօտ է բարերարների օգնութեան։ Նպաստ տալ ցանկացողները կարող են ուղարկել Թիֆլիս Խարփուխ Թաղի Կումինսկի փողոց, № 219, Գրիգօրիեվի տուն, Գէորգ Բաղդասարեանին։

—

Պետերբուրգի նահանգական դատարանը հաստատեց տոհմական պատուաւոր քաղաքացուհի Նադեժդա Պետրօվնա Անանիեվայի կտակը, որի մահից յետոյ մնաց շարժական ու անշարժ կայք եւ դրամագլուխ 3 միլիօն ռուբլուց աւելի։ Բոլոր վերոյիշեալ գոյքը եւ դրամագլուխները, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, կտակված են Պետերբուրգի վաճառականների, մէշչանների եւ արհեստաւորների հասարակութիւններին հետեւեալ պայմաններով. յօգուտ մէշչանների հասարակութեան—40,000 ր. կտակողի ամուսնու կառուցած եկեղեցին պահելու համար. իսկ մնացած ամբողջ դրամագլուխը, ագարակները եւ անշարժ կայքը կտակված են Պետերբուրգում փոքրահասակ որբերի ապաստարան եւ վաճառականների, մէշչանների ու արհեստաւորների համար անկելանոց հիմնելու նպատակով։

—

Մայրաքաղաքի լրագիրների խօսքով, մօտիկ ապագայում սպասվում է նոր օրէնքի հրատարակութիւնը գիւղատնտեսներին պրէմիա տալու մասին անտառաբուծութեան համար։

—

1901 թւին գիմնազիաներում, պրօգիմնազիաներում եւ րէալական ուսումնարաններում ընդունելութեան, աւարտման եւ դասարանից դասարան անցնելու քննութիւնները թէեւ տեղի կունենան քննութիւններին վերաբերեալ այժմ գոյութիւն ունեցող կանոններով, բայց թոյլ կը տրվին եւ շեղումներ այդ կանոններից։ Այսպէս, օրինակ, մանկավարժական խորհրդին իրաւունք է տրվում առանց քննութեան փոխադրելու հետեւեալ դասարանը այն աշակերտներին, որոնց տարեկան թւանշանը իւրաքանչիւր առարկայից պակաս չէ երեքից, իսկ գիմնազիաներում եւ պրօգիմնազիաներում ռուսաց լեզուից, լատիներէնից, յունարէնից եւ մաթեմատիկայից, նոյնպէս եւ րէալական դըպրոցում ռուսաց լեզուից եւ մաթեմատիկայից՝ պակաս չէ չորսից։ Այն աշակերտներին, որոնց տարեկան թւանշանը պակաս չէ երեքից, մանկավարժական խորհուրդը կարող է փոխադրել հետեւեալ դասարանը եւ առանց քննութեան, եթէ նրանք որ եւ է յարգելի պատճառով, որի մասին պէտք է հաւաստիաթուղթ ներկայացնեն, հնարաւորութիւն չեն ունենայ ներկայ լինելու քննութեան։ Էքստէրների գրաւոր աշխատանքները հին լեզուներից ուսումնարանական շրջանի վարչութեան ներկայացնելու պարտաւորութիւնը վերացվում է։

—

Մարտի 8-ին շվեդական գրականական ընկերութիւնը Ֆինլանդիայում միաձայն ընդունեց իր նախագահ Շիւբէրգսօնի առաջարկութիւնը երեք անձերից յանձնաժողով ընդունելու մասին, որը պէտք է զբաղվի ազգային հռչակաւոր բանաստեղծ Րունէբէրգի ծննդեան հարիւրամեակը արժանաւոր կերպով տօնելու հարցի քննութեամբ։ Գրականական ընկերութիւնը Րունէբէրգի յիշատակը պատւելու ամենալաւ միջոցը համարեց ծանօթացնել ֆին ժողովրդին նրա կենսագրութեան եւ գրուածքների հետ։

—

ՍԻՍԻԱՆԻՑ (Զանգեզուրի գաւառ) մեզ գրում են. «Անչափահաս ամուսնութիւնները սովորական երեւոյթների շարքն են անցել մեր գիւղերում։ Օրինակ, Բռնակոթ գիւղի Խ. քահանայ Տէր-Գէորգեան այս տարի կատարեց մի շարք անչափահաս պսակներ նոյն իսկ մեր գործակալի գիտութեամբ, որովհետեւ պսակադրամ եւ աջահամբոյր 25—30 կամ 50 ր. են ստանում։ Ահա ամուսնացած մի քանի անչափահաս աղջիկների անունները. 1) Բռնակոթ գիւղացի Յակոբ Ոսկանեանի 11 տարեկան աղջիկը պըսակեցին նոյն գիւղացի Առաքել Սահակեանցի հետ (25 տարեկան)։ Մանկահասակ օրիորդը, չը տանելով ամուսնական պայմանները, մի ամիս չարաչար տանջվելուց յետոյ, մեռաւ։ 2) Ղեւոնդ Առաքելեանի 11 տարեկան աղջիկը պսակեցին Օհանէս Իսկանդարեանի հետ, ստանալով 30 ր. պսակադրամ։ 3) Ամիրջան Քարամեանի 12 տարեկան աղջիկը պսակեցին համագիւղացի 32 տարեկան Սահակ Տէր-Գաբրիէլեանի հետ։ Անշուշտ առաջինի վիճակը սպասում է եւ սրան։ Այս տեսակ ամուսնութիւնների թիւը շատ է Սիսիանի գիւղերում, շնորհիւ մեր գործակալի, որին մի տարի առաջ հոգեւոր իշխանութիւնը հեռացրեց իր պաշտօնից, բայց տէր-հայրը գնաց Երեւան եւ կարողացաւ վերահաստատվել իր պաշտօնի մէջ»։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղի կանայք եւ օրիորդները, քաղաքագլխի կնոջ՝ Ն. Կ. Խաթրանեանի միջնորդութեամբ, դիմում են նախագնոյ ատեանին, որպէս զի նա հաստատէ Նոր-Նախիջեւանի հայոց կանանց Խնամատար ընկերութեան կանոնադրութիւնը, որ իսկապէս Աստրախանի կանանց Խնամատար ընկերութեան կանոնադրութեան պատճէնն է»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Հարաւային Աֆրիկայից ստացված լրագիրների վերջին համարները, «Paris Nouvelles» լրագրի ասելով, բոլորովին այլ կերպ են նկարագրում իրերի դրութիւնը պատերազմական դաշտում, քան այդ երեւում է անգլիական կառավարութեան հաղորդած տեղեկութիւններից։ Բանից դուրս է գալիս, որ բօէրների դրութիւնը ամենեւին յուսահատական չէ, որպէս աշխատում են ցոյց տալ անգլիացիները։ Ընդհակառակը, հէնց այն փաստը, որ Բօտա մերժեց անգլիական կառավարութեան առաջարկութիւնները քիչ առաջ տեղի ունեցած բանակցութիւնների ժամանակ, ցոյց է տալիս, որ բօէրները շատ հեռու են յուսահատութիւնից։ Նոյնը հաստատում են եւ այժմ հարաւաֆրիկական լրագիրների հաղորդած տեղեկութիւնները։ Այսպէս օրինակ, նրանք հաղորդում են, որ միայն փետրվար ամսին բօէրները Նատալում բռնել են երեք գնացք, որոնցից մէկի մէջ կար 60,000 ֆ. ստերլինգ՝ ուղարկված անգլիական զօրքին ռոճիկ վճարելու համար, երկրորդում—մօտ 120,000 ֆ. ստերլինգ։ Մի եւ նոյն ժամանակ բօէրներին աջողվել է խուժել հէնց Իօհաննէսբուրգ քաղաքը ու տանել այնտեղից, ի միջի այլոց, 1,500 գլուխ տաւար։ Յանվարի վերջին Վօնդէրֆօնտէնի մօտ բօէրները գերի վերցրին 500 անգլիական զինւոր, Ուիլլօումօրի մօտ—40 իօմէնների եւ 25,000 փամփուշտ։ Դէվէտ, Կապի գաղթականութեան մէջ խուժելուց անմիջապէս յետոյ, Սպրինգֆօնտէնի մօտ բռնեց մի գնացք, որի մէջ էր գնդապետ Ուայտի զօրաբաժնի ամբողջ պաշարեղէնը։

—Բօէրական գեներալ Էրազմուսի որդին, Լօնդօնում եղած ժամանակ, յայտնեց «New-York Herald» լրագրի թղթակցին, թէ անգլիացիները խաղաղութեան բանակցութիւններ պէտք է սկսէին ոչ թէ Բօտայի, այլ Կրիւգէրի հետ, որովհետեւ բօէրները կընդունեն միայն այն, ինչ որ կառաջարկէ նրանց Կրիւգէր նրանից է կախված նոյն իսկ վաղը վերջացնել պատերազմը։ Տրանսվաալի նախագահին եւ այն առանձին մասնաժողովին, որ այժմ գտընվում է Եւրօպայում, տուած է անսահման լիազօրութիւն։ Եթէ անգլիացիները չը դիմեն այդ միջոցին, բօէրները կը շարունակեն պատերազմել թէկուզ էլի երեք տարի։ Այժմ հըրացան են կրում բօէրներից մօտ 12,000 հոգի եւ նրանք մտադիր են կռւել կամ մինչեւ վերջին մարդու մահը եւ կամ անկախութիւն ձեռք բերելը։ Բօէրների մեծամասնութիւնը, Էրազմուսի ասելով, պատրաստ էր անձնատուր լինել, երբ Պրէտօրիան ընկաւ թշնամու ձեռքը, բայց երբ անգլիացիները սկսեցին այրել ագարակները, բոլորը, ով որ միայն գտնվում էր պատերազմի դաշտում, երդվեցին շարունակել պատերազմը անգլիացիներից վրէժ լուծելու համար։ Բօէրները այժմ կը հաւաքվեն Պրէտօրիայի հիւսիսակողմում, որտեղ նրանք բաւականաչափ ռազմամթերք եւ ուտելիքի պաշարեղէն ունեն։

—«Օսմանլի» լրագիրը պնդում է այն համոզման վրա, որ «Ռուսաստանին է պատկանում Հաագայում խաղաղութեան մի նոր կօնֆերենցիա հրաւիրելու իրաւունքը՝ Բերլինի դաշնագիրը վերաքննութեան ենթարկելու, Թիւրքիան զինաթափ անելու եւ նրա մէջ բարենորոգումներ մտցնելու համար։ Եթէ մինչեւ անգամ երկու-երեք պետութիւններ ընդունեն Ռուսաստանի առաջարկութիւնը լոկ pro forma, այն մտքով, որ ոչ մի համաձայնութեան չը գան, այնուամենայնիւ—ասում է լրագիրը—գոնէ Եւրօպայի հասարակական կարծիքը ամբողջապէս կը լինի Ռուսաստանի կողմը եւ ամենքը կը համոզվեն, որ Թիւրքիայում քրիստոնեաների բարբարոսական կոտորածի յանցանքը ծանրանում է ամբողջովին եւրօպական միւս մեծ պետութիւնների վրա»։

ծովածոցի վերեւում արծաթի պէս փայլում էր ձիւնը Սուրբ Հրեշտակի գագաթին, իսկ աւելի հեռուն, հսկայական օղակ կազմելով, յետ յետ էին գնում Իտալիայի լեռների մանիշակա—կապտագոյն եւ ոսկեփայլ—վարդագոյն բուրգերը, նման ովկէանի բարձրաբերձ ալիքներին։

Երկինքը, որ պարզ էր լեռնաշղթայի վերեւում եւ փայլում էր մետալային—բոսորագոյն եւ դեղնա—կապտագոյն շողքերով, նսեմանում էր արեւելքում եւ քնով անցնում։ Մթնշաղը պատեց Պօզիլէպօն. մեռելների քաղաքը անհետանում էր մի տեսակ անհուն ու անշարժ մշուշի մէջ։

Երեկոյանում էր։

Դիւթական խաղաղութիւն էր տիրում։ Միմիայն Վէզուվը էր երբեմն երբեմն գոռում-գոչումով սիւների ձեւով դուրս ժայթքում կարմիր լավան դէպի երկինք եւ շաղ տալիս օդում այնպէս, որ նա սկսում էր նմանել հրեղէն թռչունների մի ահագին երամի, որ աղմուկ հանելով իջնում էր հրաբխաբերանի լանջերով, դեռ երկար ժամանակ գետնի երեսին շողալով, մռայլ ու ահեղակերպ, կարծես ամբողջ բնութեան դէմ կատաղած։

Իսկ երբ ժայթքումը հանգաւ, նորից տիրեց դիւթական խաղաղութիւն։

Ես մենակ էի այնտեղ, հեռու տնիցս,—որ, ասենք, արդէն իմս չէ այլ եւս,—եւ սկզբում ինձ թւում էր, թէ մօտս չը կայ մէկը, որին կարողանայի ասել՝ «Նայիր», բայց յետոյ զգացի, որ ոչ ոք չէր էլ կարող լինել ինձ մօտ, որովհետեւ ոչ մի մարդ չունէի ոչ մի տեղ։

IV Ապակէ պատի յետեւում

Մեզնից մի քանիսը նստած են ապակէ պատի յետեւում։ Այնքան բարակ է նա, որ կարծես ամենեւին գոյութիւն չունի։ Սակայն նա կայ,—մեկնեցէք ձեռներդ եւ դուք կը դիպչէք նրան։

Նրա միջով ամեն ինչ այնքան պարզ է տեսնվում, որ կարծես նա գոյութիւն չունի։ Մարդիկ մեզնից այնքան մօտիկ են անցնում, կարծես թէ ոչ մի բան նրանց չէ բաժանում մեզնից։ Եւ եթէ դուք չը մեկնէք ձեռներդ, չը մօտեցնէք բերաններդ, կարող էք կարծել, նոյն իսկ հաւատալ, թէ ձեզ ոչինչ չէ բաժանում նրանցից։

Հապա ինչու եկար դու, գեղեցկուհի։ Ինչու ես անցնում իմ աչքի առջեւ քո արքայական գեղեցկութեան վեհութեան եւ իմ սիրոյ բոցի մէջ։ Ինչու եկար։ Ես մեկնեցի ձեռքս, իսկ դու չը նկատեցիր անգամ իմ շարժումը,—ես դէմ առայ այդ ապակէ պատին, որով ճակատագիրը մեզնից մի քանիսին բաժանել է աշխարհից։

Եւ դու կը շարունակես ճանապարհդ, իսկ ես կը մնամ ապակէ պատի այս կողմը, եւ կը տեսնեմ, թէ ինչպէս դու հետզհետէ աւելի ու աւելի կը հեռանաս եւ կը սկսես չքանալ աչքիցս՝ քո արքայական գեղեցկութեան առաջ խոնարհվող գլուխների եւ ուսերի մէջ։ Ես այդ կը տեսնեմ՝ ապակէ պատի միջով, որի մէջից այնքան պարզ է երեւում ամեն ինչ, կարծես թէ նա գոյութիւն չունի, բայց որ մեզնից մի քանիսին կտրում է աշխարհից։

V Բախտը

Մի խօսէք ձեր փափագած բախտի մասին, մի խօսէք նրա մասին...

Բախտը թռչնիկի նման է—շատ հեշտ է խրտնում։

Հանդարտ սպասեցէք, մի խօսէք նրա մասին, նոյն իսկ մի մտածէք... Ձեր սրտի խաղաղութեան մէջ, ձեր սրտի խորքում բաղձացէք նրան, թագցնելով այդ բաղձանքը ձեր սեփական մտքից։

Բախտը նման է թուխպերի մէջ պահված լոյսին,—մի վայրկեան դուրս կը նայի, կը շողշողայ, բայց իսկոյն եւ եթ կը թագնվի նորից։

Մի կանչէք բախտը, մի ձգտէք նրան, մի մաքառէք նրա համար։ Ինչպէս երեխաները ճրագալոյցի գիշերը երազում տեսնում են, որ Քրիստոս գալիս է իրանց մօտ ու ընծաներ է բերում, եւ սպասում են նրան յուզված, անբարբառ ու անհամբերութիւնից դողդողալով, այդպէս եւ դուք սպասեցէք։

Եթէ բախտը գալու է, կը գայ... դուք մի գնացէք դէպի նա։

Բախտը նման է արեգակին, որին փափագում են՝ մի օր միայն ապրող ծաղիկները... Նրանք չեն կարող գնալ արեգակի մօտ, նրանք սպասում են։

Եթէ օրը անամպ է, նա կը գայ. եթէ թուխպերը պատեն երկինքը, նրանք զուր կը սպասեն։

Նրանք կը թառամեն առանց արեւ տեսնելու։ Երեկոյեան, մահվան ժամին, նրանք կը շշնջան. «Զուր բացինք նրա համար մեր բաժակները... նա չեկաւ»։

Լուռ սպասեցէք բախտին... լռութիւնը սրտի համար նոյնն է, ինչ որ արեւը մի օր միայն ապրող ծաղիկների համար... Եթէ նա գալու է, կը գայ։

Մի խօսէք ձեր փափագած բախտի մասին, մի խօսէք նրա մասին... Նա խրտնում է թռչնիկի նման։

Տ. Յ.

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, թէ Վալդէկ-Րուսսօյի մինիստրութիւնը վճռել է անել ամեն հնարաւոր բան, որպէս զի պատգամաւորների ժողովում ընկերակցութիւններին վերաբերեալ օրինագծի քննութիւնը վերջանայ մինչեւ զատկական արձակուրդը։ «Matin» լրագրի տեղեկութիւններով՝ Վալդէկ-Րուսսօ կը պահանջէ պատգամաւորական ժողովից, որ նիստեր կազմվեն ամեն օր եւ այն էլ օրը երկու անգամ—առաւօտեան եւ ճաշից յետոյ։ Իսկ եթէ օրինագծի քննութիւնը չը վերջանայ մինչեւ զատիկ, պարլամենտական արձակուրդը կը յետաձգվի այնքան ժամանակ, մինչեւ որ նա վերջնականապէս ընդունվի։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Շարունակում եմ ճանապարհորդութեանս նկարագրութիւնը։

Ախալցխայում ես մնացի միայն մի քանի ժամ։ Շրջագայեցի քաղաքում եւ ծանօթացայ մի քանի անձանց հետ, որոնցից տեղեկացայ օրվայ խնդիրների մասին։

Ախալցխան նոյնն է, ինչ եւ միշտ. փոփոխութիւնները կատարվում են դանդաղ կերպով։

Ես մօտեցայ նոր շինվող անշուք կամուրջին եւ նայում էի նրան։ Կարճ միջոցից յետոյ եկաւ կանգնեց ինձ մօտ մի պատկառելի ծերունի, որ նոյնպէս սկսեց նայել շինութեան։

—Շուտ կը վերջացնեն, հայրիկ, հարցրեցի ես։

—Այո, շատ չը պիտի քաշէ, պատասխանեց նա։ Դու երեւի օտարական ես։

—Այո, անցորդ եմ։

Ծերունին պատմեց թէ քանի անգամ է շինվել եւ նորոգվել իրանց կամուրջը։

—Ինչպէս է ձեր Ախալցխան այժմ, հետաքրքրվեցի ես. աջողակ են գործերը։

—Ի՞նչ աջողակ։ Սահմանը երբ հեռացաւ, ամեն բան փչացաւ. Ախալցխան քաղցր տեղ է, բայց համը կորաւ, պատասխանեց ծերունին վրդովված ձայնով։

—Ի՞նչ սահման, հարցրի ես։

—Օսմանլուի սահմանը։ Կռւից առաջ Օսմանլուի սահմանը մեզ շատ մօտ էր։ Երբ ռուսը եւ Թուրքը կռւեցին՝ սահմանը փոխվեց եւ հիմի շատ հեռու է մեզնից։

—Էհ, ձեզ ինչ վնաս, զարմանքով հարցրեցի ես։

—Մի՞թէ մեր գործերին դու ամենեւին ծանօթ չէիր։ Սահմանը մեզ օգուտներ շատ էր տալիս։ Մեր քաղաքում մեծ առուտուր կար։ Շատ մարդ այն ժամանակ հարստացաւ։

—Չեմ հասկանում, ասացի ես։

—Ինչ չը հասկանալու բան կայ, անհանգիստ ձայնով վրա բերեց ծերունին։ Օսմանլուի սահմանից էժան ապրանք էինք ստանում։

—Ուրեմն մաքսանենգութիւն, բացականչեցի ես։

—Ինչպէս ասացիր, հարցրեց նա։

—Ուրեմն կոնտրաբանդ, կրկնեցի ես աշխարհաբար լեզուով։

—Հիմի միայն հասկացա՞ր, զուարթ եւ պայծառ դէմքով շեշտեց նա։ Էհ, շատ միամիտ ես եղել։ Ո՞րտեղացի ես։

Ծերունու հետաքրքրութեանը բաւարարութիւն տալուց յետոյ, առաջ գնացի։

—Այս տարի մեր գաւառի մրգեղէնը վատ բերք տուեց. գործերը դադարած են, գանգատվեց մի նոր ծանօթ։

—Բիչ-միչ ոսկերիչների գործը դեռ լաւ է. այն էլ սակայն միայն միջակ կերպով լաւ է. իսկ ընդհանրապէս շատ էլ լաւ չէ, ասաց մի արհեստաւոր։

Ընկայ երիտասարդների մի խմբի մէջ, որոնց հետ խօսակցութեան բռնվեցի։

—Ի՞նչ հարցեր, ինչ գործեր կան ձեզանում, հարցրի ես նոր ծանօթներից։

—Երէցփոխական հարց, պատասխանեցին նրանք միաբերան։

—Դարձեա՜լ, բացականչեցի ես յուսահատ ձայնով։

—Ինչպէս թէ «դարձեալ», չուարած նայեցին նրանք միմեանց եւ ինձ։ Ի՞նչն է դարձեալ. մենք դեռ ոչինչ չենք ասել։

Իմ բացականչութիւնս բոլորովին զարմացրել էր նոր ծանօթներիս։ Ես պէտք է մի փոքր բացատրութիւն տայի։

—Թիֆլիսում, յայտնեցի ես, մենք չը գիտենք ուր փախչենք երէցփոխական անվերջ հարցերից։ Ուր որ գնում ես Թիֆլիսում՝ երէցփոխների հաշուետուութեան, զեղծումների կամ գողութիւնների պատմութիւններ ես լսում։ Ես կարծում էի, թէ քանի որ Թիֆլիսից բացակայ եմ, այլ եւս չեմ լսելու այդպիսի բաներ։ Յանկարծ դուք էլ սկսեցիք այդ չարաբաղդ հարցից։ Ինչպէս չասէի «դարձեալ»։

—Մի՞թէ մենք մեղաւոր ենք, որ երէցփոխների մեծամասնութիւնը ամեն տեղ միատեսակ է, պատասխանեցին նրանք։

Ես սթափվեցի իմ առաջին ծանր տպաւորութիւնից եւ աւելի հանգիստ տրամադրութեամբ դիմեցի նրանց։

—Ո՞րքան ուժեղ է ձեր մաքառումը. արդեօք հասել էք աջող հետեւանքների։

—Էհ, պատասխանեց նրանցից մէկը, մեր բանը ուղիղ հասել է այն դրութեան, որի մասին բանաստեղծը ասել է՝

Աստուած, սրտով որ բարի ես,
Մենք վար, Դուն վեր, շատ հեռի ես.
Այժմ ալ խոշոր գործերի ես.
Ապա որին մենք գանգըտինք։

—Ի՞նչ էք ուզում ասել, հետաքրքրվեցի ես։

—Մեզ լսող չը կայ, մեր բողոքներին ականջ դնող չը կայ։ Լսեցէք մեր գլխի եկածները։

Շատերը խառնվեցին խօսակցութեան մէջ։ Բնորոշ բաներ շատ լսեցի եւ մանուածապատ գործերի հետ ծանօթացայ։

Արժէ՞ արդեօք պատմել ձեզ բոլորը։

Անկասկած ոչ։

Դրանք հին պատմութեան կրկնութիւններն են նոր համեմներով։

Ընդհանուր գծերով կարող եմ պատմել հետեւեալը։

Ախալցխա քաղաքում կայ ս. Փրկիչ անունով եկեղեցի։ Այդ եկեղեցին, ինչպէս եւ մեր միւս եկեղեցիները, ունեցել է մի երէցփոխ, որ եղել է շատ ազգասէր, եկեղեցասէր, բարեպաշտ, աստուածավախ... եւ գործել է, ինչպէս գործում են աւանդական երէցփոխները։

Դա պատմութեան առաջին, Նախաջրհեղեղեան, դիւցազներգական շրջանն է։

Յետոյ ինչ է լինում, ինչ չէ լինում, որոշ յայտնի չէ։ Միայն թէ երէցփոխի գործերի վրա նշանակվում են մի քանի հոգէառ Գաբրիէլ հրեշտակապետներ կամ աշխարհաբար լեզուով՝ հաշուետեսներ։ Մօտ հինգ ամիս այդ հոգէառները գործերը քրքրելուց, դէս ու դէն քաշքշելուց, չափելուց ու կշռելուց յետոյ վերջացրել են իրանց քննութիւնը։

Դա երկրորդ, խուզարկական եւ կասկածի շրջանն է։

Ախալցխայի յաջորդ Կիւրեղ Կիւրեղեանը, որ եկեղեցու արթուն պահապանի հազուագիւտ տիպարն է, զգաց, որ հաշուետեսները վնասակար մարդիկ են արդի հոգեւորականների ուղղութեան համար, ուստի աշխատում էր հակակշիռ լինելու հաշուետեսներին։

—Հոգեւոր իշխանութիւնը իր որոշ ուղղութիւնն ունի, ասում էր յաջորդը բոլոր ժամանակը, թող հաշուետեսները գլուխ կոտրեն եւ հաշիւները քրքրեն. մենք կը գործենք մեր ուղղութեամբ։

Հաշուետեսները դիմում են կոնսիստորիային։

—Թոյլ տուէք, ասում են նրանք, գումարելու ծխական ժողով, որ լսէ հաշուետեսների քննութիւնը։

Եւ սկսում են սպասել պատասխանի եւ կարգադրութեան։

Այդտեղ սկսվում է երրորդ, Ջրհեղեղի շրջանը։ Հեղեղը ամեն բան ծածկում է։ Խեղդվում են ձայները։

Անցնում են ամիսներ։ Ախալցխացիները կարդում են լրագիրներում, որ Վեհափառը եկել է Թիֆլիս։ Որոշում են ուղարկել պատգամաւորութիւն նրա մօտ։

—Գնացէք խաղաղութեամբ, ասում է պատգամաւորներին Վեհափառը։ Կօնսիստօրիայի կողմից նշանակված է Մելեան քահանան ձեր գործերը նայելու եւ քննելու։

Ախալցխացիները վերադառնում են։

—Ի՞նչ մարդ է այդ Մելեանը, արդեօ՞ք երկդիմի անձնաւորութիւն չէ, հարցնում էին միմեանց երիտասարդները, արդեօ՞ք շիտակ պէտք է գործէ, խորամանկութեան խօմ չը պէտք է դիմէ։

—Ոչ, ոչ, հազար անգամ ոչ, հաստատ յայտնեցին միւսները։

—Աստուած տայ, մաղթեցին կասկածողները, եթէ չէ, գործը չի վերջանայ, այլ աւելի եւս կը բարդանայ։

—

Ախալցխա ես չէի կարող երկար մնալ, ուստի խօսակցութիւնս ընդհատեցի՝ կայարան վերադառնալու համար։

—Մենք ձեզ չը պատմեցինք մեր երեւելի յաջորդ Կիւրեղեանի մասին, ասաց մէկը։

—Ես ձեզ կամենում էի բացատրել, ասաց միւսը, թէ ինչի մէջն էր կայանում հանգուցեալ Խորէն Ստէփանէի ժողովրդականութեան գաղտնիքը Ախալցխայում եւ թէ ինչու այժմ էլ, երբ տարածվեց նրա մահվան լուրը, այստեղ այդ լուրը մի առանձին արձագանք գտաւ համքեարների շրջանում։

—Իսկ ես մտադիր էի ձեզ գաղափար տալ մեր հասարակութեան մէջ երեւացող այն թարմ հոսանքի մասին, որ թէեւ այժմ դեռ շատ թոյլ է եւ սահմանափակ, բայց ունի զարգանալու սաղմեր իր մէջ, ասաց երրորդը։

Ուրիշներն էլ պատմելու բաներ ունէին։

—Պարոններ, գնանք կամաց-կամաց եւ խօսենք։ Ես չեմ կարող ուշանալ։

Մինչեւ կայարան հասնելը բաւական խօսեցինք եւ ես շատ բնորոշ ու հետաքրքրական բաներ իմացայ։ Գուցէ մի ժամանակ օգտվեմ յարմար դէպքից եւ պատմեմ։

Բաժանվելով իմ նոր ծանօթներից՝ ես նստեցի կառք, որ պէտք է տանէր մեզ դէպի Ախալքալաք։

—

Ճանապարհը ընկած էր Կուր գետի ուղղութեամբ դէպի վեր։ Գետի ջուրը պղտորվել էր եւ չառագունել։

—Գիտէք, ինչեր է տեսել այս գետը, ասաց ինձ իմ ուղեկիցը։ Հարիւր քառասուն տարի սրանից առաջ, 1761 թւին, այստեղ վրաց թագաւորը մեծ կռիւ ունէր Թուրքերի հետ։ Այնքան մարդիկ էին կոտորվել Ասպինձայի պատերազմում, որ սպանվածների արիւնից Կուրի ջուրը կարմրել էր եւ այդ արիւնոտ ջուրը հասաւ նոյն իսկ մինչեւ Թիֆլիս։

—Ահա Րուստավը,—մէջ մտաւ մեր կառապանի մօտ նստած պօստային ծառայողը,—որտեղ ծնվել է Շօթա Րուստավելին։

—Երեւակայեցէք, շարունակեց իմ ուղեկիցը, այն խուլ ժամանակ Ռուսաստանից եկել էր Վրաստան Տօտլեբէն զօրավարը իր զօրքերով. սակայն նա մի քանի զօրաշարժներ կատարելուց յետոյ հեռացաւ այստեղից։

—Ինչո՞ւ եկաւ, ինչու գնաց։

—Թուրքերի աչքին միայն երեւալու համար։

Ահա Խերթվիսի բերդը իր հետ կապված աւանդութիւններով։ Ահա մի շարք պատմական տեղեր...

Հասանք Ախալքալաք։

—

Ի՞նչ գրեմ ձեզ Ախալքալաքի մասին։ Դուք գիտէք այն երկպատիկ, երեքպատիկ, տասնապատիկ թշուառութիւնների մասին, որոնց ենթարկվեցին ախալքալաքցիները։

—Հէնց միայն երկրաշարժը իր սարսափելի արտայայտութիւններով, տեսէք, ինչ արժէ։

—Իսկ հօտենտօտեան մուկը եւ հացի բզէզը։

—Իսկ վաղաժամ ձիւնը, ժանգը, հացի մրիկը։

—Իսկ վաշխառութեան ծանր քարը։

—Իսկ դաւադրութիւնները, մատնութիւնները, սպառնալիքները, զրկանքները։

—Իսկ հողերի սխալ գնահատութիւնը, որ արեցին կալուածատէրերը։

Եւ այլն, եւ այլն։

Ներկան լաւ չէ, իսկ ապագայի հօրիզօնն էլ դեռ ամպերի մէջ է։

Օրվայ ամենամեծ չարիքը—գիւղերի թշուառութիւնն էր, որ եւ դարձաւ մեր խօսակցութեան նիւթը այն բոլոր անձանց հետ, որոնց պատահեցինք։

Սրտաճմլիկ տեսարաններ։

Գիւղերում մարդիկ սակաւապէտ են. ինչ կը լինի մարդկանց դրութիւնը, եթէ նրանք ստիպված լինեն աւելի եւս սղմվելու, աւելի եւս կրճատելու իրանց սնունդը։

—Հացի բաժինները փոքր փոքր ենք անում, ասում էին մեզ գիւղացիները, որպէս զի պաշարը շուտ չը հատնի։

—Առաւօտեան անօթի ենք մնում, ասելով, որ մի կերպ կանցկացնենք մեր օրը ու երեկոյեան կուտենք։ Իսկ երեկոյեան էլ ասում ենք՝ քիչ ուտենք ու աւելի շատ քնենք, որ չը քաղցենք։

Շաբաթներով, ամիսներով շարունակվում է պակասաւոր սնունդը։

Ժողովուրդը լաւ չէ սննդվում։

Սրանից էլ աւելի մեծ դժբաղդութիւն։

Լաւ է, որ հիւանդութիւններ չը կան գաւառում, մանաւանդ վարակիչ հիւանդութիւնները, որոնց զարգացման համար շատ արգաւանդ հող կայ կարօտ գիւղերում։

Դժբաղդութեան մէջ դա էլ մի մասնաւոր բաղդ է։

—Երկու օր է, հաց չունենք, ասում էր Օրջա գիւղից մի ծերունի։ Մէկը խղճաց ու ալիւր տուեց։ Թոռներիս ուրախութիւնը ինձ լացացրեց։ Թարմ հացի հոտը դարձեալ տարածվեց մեր տան մէջ։ Թոռներիցս մէկը, չը սպասելով մինչ հարսս կը հանէ հացը թոնրից, ինքը շտապել էր դէպի թոնրի կողքը եւ յանկարծ ...խեղճ ձագուկս թոնրի մէջ գլորվեց։ Լաւ է, որ իսկոյն բռնեցին եւ միայն այրուածքներով պրծանք։

Տեսանք շատ կարօտներ, լսեցինք շատ սրտակտոր դէպքերի նկարագրութիւններ։ Նրանց մի մասը ձեզ էլ յայտնի է։

—

Ծանր տպաւորութեան տակ ես պառկեցի քնելու։ Երկրաշարժ, աղքատութիւն, վաշխառութիւն, նենգութիւններ՝ բոլորը խառնված միասին՝ կարող էին փախցնել մարդու քունը։

Բայց ճանապարհից ստացած յոգնածութիւնը կատարել էր դերը եւ ես շուտով աչքերս փակեցի։

Եւ ահա մի երազ հօյակապ տեսիլներով իմ առաջ։

Մի շարք հրաբուղխներ։

Լեռնային այն գեղեցիկ շղթան, որ ընկած էր Տաբացխուր, Տօպօրովան եւ Սաղամօ ալպիական լճերի մէջ, ջահաւորված է։

Հին հրաբուղխները նորից բորբոքվել են։ Աբուլ, Սամսար, Շավինաբադ, Կարադաղ, Քեօռօղլի սարերի կատարները վառվում են ահեղ հրեղէն սիւներով։

Ժողովվել են հանդիսատեսներ ամեն կողմից։ Յանկարծ սրանց մէջ ես նկատում եմ Բագուի նաւթագործներին։

—Ինչո՞ւ համար են դրանք եկել այստեղ, հարցրի մի պարոնից։

—Ասում են, այստեղ նաւթի առատ հանքեր են երեւացել եւ այդ պատճառով սկսվել է մեծ իրարանցում նրանց մէջ։

Այդտեղ էին Բագուի բոլոր նշանաւոր ֆիրմաների տէրերը եւ բազմաթիւ միջնորդներ, Թիֆլիսի նշանաւոր նաւթարդիւնաբերական ընկերութեան բոլոր անդամները եւ շատ ուրիշները։

Որտեղից որտեղ եւ չը գիտեմ ինչպէս, յանկարծ, միտքս եկան Ախալքալաքի թշուառ գիւղերի կարօտեալները։

—Ի՞նչ լաւ եւ յարմար դէպք է. դիմեմ այստեղ ժողովված հարուստներին եւ յայտնեմ քաղցածների վիճակի մասին, մտածեցի ես։

Նաւթագործները եւ միւս կրեսոսները հպարտ դէմքով նայում էին իրանց շուրջը։

—Հրաբուղխները եւ երկրի տիտանական ոյժերը մեզ համար են գործում, ասում էին նրանց դէմքերը։

Ես առաջ գնացի եւ երբ տեսայ նրանց բարի եւ ժպտացող դէմքերը, քաջալերվեցի։

—Պարոններ, ասացի ես, այդ հրաբղխային ոյժերը ձեզ օգնել են. բայց կան նրանցից եւ վնասվածներ։ Ամբողջ այս գաւառը, որ հաց էր տալիս ձեզ նմաններին, այժմ հացի կարօտ է, եւ բոլորովին անապահով։ Ձեռք կարկառեցէք...

Ես դեռ չէի վերջացրել իմ խօսքերը, երբ յանկարծ լսվեց մի գոռ ձայն, տեսարանը մթագնեց, հրաբուղխները մարեցին, հարուստները անհետացան։

Ես զարթնեցի։ Առաւօտ էր։ Իմ դուռը բաղխում էին։ Նայեցի։ Կարօտ գիւղացիներն էին կանգնած դռան ետեւ։ Եկել էին շարունակելու իրանց գանգատը։

Տխուր իրականութիւնը իր ոյժի մէջ էր։

Վրձին

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

17 մարտի

ԲՈՒԽԱՐԷՍՏ։ Պատգամաւորների ընտրութիւնները աւարտված են։ Երրորդ շրջանում ընտրված են բացառապէս ազատամիտները, երկրորդում 68 ազատամիտներ եւ մէկ պահպանողական, առաջինում 70 ազատամիտներ եւ հինգ պահպանողականներ։

Կ. ՊՕԼԻՍ։ Մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, յեղափոխական ագիտացիայի մէջ մեղադրվող 19 բօլգարների դէմ սկսված դատի մէջ Սօլունում, երեքը դատապարտված են մահվան պատժի, եօթը ցմահ բանտարկութեան, հինգը հինգ տարվայ բանտարկութեան եւ մէկը միամեայ բանտարկութեան։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովի եւ սենատի նիստերը յետաձգված են մինչեւ մայիսի 2-ը։

ՀՌՕՄ։ Պատգամաւորների ժողով։ Մասցիանտոնիայի հարցապնդումին արտաքին գործերի մինիստրը յայտնում է, թէ անհիմն են այն լուրերը, որ իբր թէ ֆրանս-իտալական դաշնադրութիւն է կապված տրիպօլիական վիլայէթը իբր թէ բաժան բաժան անելու համար։

ԼՕՆԴՕՆ։ Լօրդերի ժողովը ցրվեց մինչեւ ապրիլի 9-ը։

ՊԱՐԻԶ։ Պատգամաւորների ժողովը ընդունեց ընկերակցութիւններին վերաբերեալ ամբողջ նախագիծը։

ՎԻԷՆՆԱ։ Բօլգարական Ֆէրդինանդ իշխանը գահաժառանգ իշխան Բօրիսի հետ կանգ չառնելով անցաւ Վիէննայի եւ Նիցցայի վրայով։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Օրանժեան գետը կրկին բարձրացաւ։ Բօէրական մէկ զօրաբաժին ամրացաւ Զուրբան լեռների վրա։

ԵՕՀԱՆՆԷՍԲՈՒՐԳ։ Կայսերական թեթեւ հեծելազօրը մեծ կորուստներ կրեց մարտի 9-ին Դէլարէի հետ տեղի ունեցած կռւի մէջ Գարրբեստֆօնտէնի մօտ. բօէրները, որոնք նոյնպէս շատ վնասվեցին, յետ քաշվեցին հէնց որ անգլիական օգնական զօրքերն եկան։ Անգլիացիներից սպանվեցին երկու օֆիցէր եւ հինգ զինւոր, վիրաւորվեցին երեք օֆիցէր եւ տասներեք զինւոր։

ՇԱՆԳՀԱՅ։ Սէյկերի մի գունդ եւ թնդանօթաձիգ զօրքերը ութ արագահար թնդանօթներով շուտով այստեղից կերթան Տեանձին, որպէս զի մասնակցեն Շանգհայգուան—Պեկինեան երկաթուղու հսկողութեանը։ Ցզիցզեան նահանգի չինական իշխանութիւնները, առանց օտարազգիների կողմից որ եւ է ճնշման, վարձատրեցին քրիստոնեայ բնիկներին այն կորուստների համար, որ նրանք կրել են քրիստոնեաների դէմ ուղղված խառնակութիւնների ժամանակ։ Այդ փաստը նշանաւոր է այն կողմից, որ պետութիւնների պահանջների մէջ ոչինչ չէ ասված քրիստոնեայ բնիկների վարձատրութեան մասին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(ժամերը Պետերբուրգի հաշւով)
տարբերութիւնը 58 րօպէ։

—

	№ 5 գնացքը:	№ 3 գնացքը.
Բագուից դուրս է գալիս	ցեր. 3 ժ. 5 ր.	գիշ. 11 ժ. 15 ր.
Թիֆլիս է հասնում	առ. 8 » 23 »	եր. 5 » 35 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 3 »	եր. 6 » 30 »
Բաթում է հասնում	եր. 9 » 11 »	առ. 7 » 10 »

	№ 6 գնացքը:	№ 4 գնացքը.
Բաթումից դուրս է գալիս	առ. 8 ժ. 56 ր.	եր. 10 ժ. 47 ր.
Թիֆլիս է հասնում	եր. 8 » 42 »	առ. 11 » 18 »
Թիֆլիսից դուրս է գալիս	» 9 » 22 »	» 12 » 36 »
Բագու է հասնում	ցեր. 1 » 25 «	» 7 » — »

արագ գնացք

Շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը.

Թիֆլիսից դուրս է գալիս	առաւ.	7 ժ.	56 ր.
Բաքու է հասնում	երեկ.	9 »	— »
Բաքուից դուրս է գալիս	առաւ.	6 »	50 »
Թիֆլիս է հասնում	երեկ.	8 »	12 »
—			
Թիֆլիսից դէպի Կարս դուրս է գալիս.	երեկ.	10 ժ.	—
Ալէքսանդրոպոլ հասնում է	առ.	8 »	27 ր.
Կարս հասնում է	ցեր.	12 »	23 »
Կարսից դուրս է գալիս	ցեր.	4 »	12 »
Ալէքսանդրոպոլ հասնում է	երեկ.	7 »	40 »
Թիֆլիս հասնում է	առ.	6 »	15 »

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա. Վորոնցովի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.

Ն. Մ. Զիկովսկի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Ն. Ի. Գզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.

Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.

Ս. Գ. Կարապետեանց—1—$1^1/_2$ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.

Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), և վեներ. հ.

Գ. Ա. Թառխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.

Բ. Ա. Նաւասարդեան—$7^1/_2$—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. Ասվանիձակի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

1. Հանգուցեալ Թագուհի Փանոսեանի կալուածքը (քարվանսարա), Հաւլաբարում, Կախետինսկայա փողոցում: Հողի քանակութիւնն է 1442 քառակուսի սաժէն: 2. Երկյարկանի նոր տունը Մեսխիսկայա փողոցում, Գնի մասին կարելի է տեղեկանալ երդուեալ հաւատարմատար Յովսէփ Ամիրխանեանից ամենայն օր երեկոյեան ժամի 5-ից մինչև 7: Մթածմինդսկայա փողոցում տուն № 17:

(18, 20, 22) 1—3

ՀՐԱՒԷՐ

Մարտի 18-ին, կիրակի, առաւօտեան ժամը 12-ին, էջմիածնեցւոց ս. Գէորգ եկեղեցում ժողով է լինելու, նոր երէցփոխան ընտրելու, ուստի սրանով մեծապատիւ պ.պ. ծխականները առաջին անգամ հրաւիրվում են ներկայ լինել յիշեալ եկեղեցում ընտրութեանը մասնակցելու:

Գործակալ բ. մասին Թիֆլիսի՝

3—3 Գրիգոր ա. քահ. Մանդակունի

ՀՐԱՒԷՐ

Մարտի 18-ին, կիրակի, առաւօտեան ժամը 10-ին, ս. Մինաս եկեղեցումը ժողով է լինելու նոր երէցփոխ ընտրելու համար, ուստի սրանով մեծապատիւ պ.պ. ծխականներն առաջին անգամ հրաւիրվում են ներկայ լինել յիշեալ եկեղեցում ընտրութեանը մասնակցելու:

Գործակալ բ. մասի Թիֆլիսի՝

3—3 Գրիգոր ա. քահ. Մանդակունի

ՀՐԱՒԷՐ

Սրանով յարգոյաբար երկրորդ անգամ խնդրում եմ Թիֆլիսի Բեդղեհէմ ս. Աստուածածին եկեղեցու բարեպաշտ ծխականներին՝ շնորհ բերել յիշեալ եկեղեցին՝ ամսիս 18-ին, առաջիկայ կիրակի օրը, 12 ժամին, նախ՝ պ. երէցփոխի անցեալ 1900 թուականի եկեղեցական հաշիւները տեսնելու եւ երկրորդ՝ երէցփոխի ընտրութիւն անելու:

Գործակալ ա. մ. եկ. հ. Թիֆլիսի՝

2—2 Զաքարիա քահ. Զարդեղեանց

ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА НА ГАЗЕТУ

„Новости Дня“

возобновленную

по распоряженію г-на Министра Внутреннихъ Дѣлъ.

съ 1-го марта до конца года,—(десять мѣсяцевъ)—СЕМЬ руб.

МОСКВА. 3—3

ՎՐԱՑ ԱԶՆՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Չորեքշաբթի, մարտի 21-ին

ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՁԵՌՆԱԾՈՒՆ

որը պատիւ է ունեցել տալ իր ներկայացումները Մեծ Իշխան Միխայել Նիկոլաեվիչի պալատում,

ԱՆԴԱՄ ԲԵՐԼԻՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏԻ

Ն. Ա. ԿՕԶԼՕՎ

կը տայ հակասպիրիտիկական, մէդիումական ձեռնածուական երեկոյ, որի մէջ կը մտնեն շատ նորութիւններ, որոնք բերված են Պարիզի ցուցահանդէսից: Սկիզբը երեկոյեան $8^1/_2$ ժամին: Տոմսակները վաղօրօք ծախվում են Թատրոնի կասսայում: 1—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

„ՄՈՒՐՃ“

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

№ 3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԱՆՀԱՒԱՏԸ, *պատմուածք* Ա. Ահարոնեանի, 2. ՄԵՆԱԿ ՄԱՐԴԻԿ, *դրամա* Գերհարտ Հաուպտմանի, *թարգմ.* Ե.-Ա., 3. ԱՆԻԾԱԾ ՀԱՐՍԸ, *ժող.-լեգենդա.* Յովհ. Թումանեանի, 4. ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԻՏԱԼԱՑԻՆ, *պատմուածք* Մաքս Նորդաուի, *թարգմ.* Լ. Բաբայեանի, 5. ՁԷՅԹՈՒՆԻ ՆԵՐԿԱՅԻՑ, Հ., 6. ԳԻՒՂԻ ՄԱՐԴԻԿ, II *Հողից կտրուածներ*, Լէօի, 7. ՖՐՕՄՕՆ ԿՐՏՍԵՐ, *վէպ* Ալֆօնս Դօդէի, *թարգմ.* Տ. Յովհաննիսեանի, 8. ՀԱՅԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ, Ստ. Մալխասեանի, 9. ԲՈՒԴԴՀԱ, *բանաստեղծութիւն* Մերեժկովսկիի, *թարգմ.* Կ. Կրասիլնիկեանի, 10. ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ, Լէօի, 11. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ, *առողջապահական էտիւդ*, բժշ. Վ. Արծրունու, 12. ԱՅՈ՛, ՀԷՆՑ ՆՈ՛Ր ԷՐ, *բանաստեղծ.* Ալ. Ծատուրեանի, 13. ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ,—10. Մուրացան «Ռուզան», Լ.—11. Վինօգրադօվ. «Դասագիրք ընդհանուր պատմութեան», թարգմ. Ն. Քարամեանի, Ստ. Մալխ.—12. Լէօ. „Հայկական տպագրութիւն“, Ստ. Մալխ.—13. Ն. Տաղաւարեան. «Տարրինականութիւն», Ս. Բ.—14. Տօտոմեանց և Թոփչեանց «Տաճկաստանը հասարակական և տնտեսական տեսակէտից», X. 14. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Օտար դրամագլուխները Ռուսաստանում:

15. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մտաւորականութեան նշանակութիւնը հասարակական զարգացման մէջ.—Եւրոպական ազատարար գրականութեան ազդեցութիւնը Ռուսաստանի ներքին կեանքի վրայ.—Ալէքսանդր II-րդի վերաբերմունքը դէպի ճորտերի ազատութեան խնդիրը.—1861 թ. փետրուարի 19-ը.—Ազատ աշխատանք և գիւղացիական հողատիրութիւն.—Հողաբաժինների պարտադիր յետ գնումն.—Կալուածատիրական հողերի վրայ ապրող գիւղացիների դրութիւնը Անդրկովկասում.—Ձրի աշխատանքից օգտուողներ.—Մանր տնտեսութիւնների դիմացկունութիւնը.—Սակաւահողութեան դէմ գործադրուող միջոցներ.—Տեղական ինքնավարութեան նշանակութիւնը երկրագործ ժողովրդի համար.—Ճորտերի ազատութեան քառասնամեակի առիթով որոշումներ.—Մարմնական պատժի վերացման միջնորդութիւններ.—Ճորտերի ազատութիւնը իբրև հիմք վաթսունական թուականների վերանորոգութիւնների.—Պաշտօնական հաղորդագրութիւններ ուսանողական խառնակութիւնների մասին, **Լ. Ս.**

16. ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ. I Անբերրիութիւնը Ախալքալաքի գաւառում և նրա հետևանքները, Սալլիւմեան.— II Աղքատների խնամատարութիւնը Բագւում, **Ա.**

17. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Զարգացման հիմնական օրէնքը—Վայրենիների համախմբում և քաղաքակիրթ հասարակութիւն.—Համախմբում ազգայնական սկզբունքով.—Երկու տեսակ նացիօնալիստներ.—Դրանց յարաբերութիւնը.—Համամարդկային համերաշխութիւն հաւասար ազգութիւնների մէջ.—Անհատական և միջազգային վէճերի լուծման օրինական միջոց.—Չէխեր և գերմանացիներ.—Իրլանդացիներ և անգլիացիներ.—Իրլանդական օբստրուկցիա պարլամէնտում.—Իրլանդականլեզուն անգլիական պատգամաւորների ժողովում.—Իրլանդական պարլամէնտ և համալսարան.—Հողային հարցը Իրլանդիայում.—Բանակցութիւններ անգլիացիների և բօէրների մէջ.—Սօցիալիստ Ժօրէսի առաջարկը ֆրանսիական պատգամաւորների ժողովում.—Դէրուլէդ և ֆրանսիական նացիօնալիստներ.—Մակեդոնիայի պահանջները.—Եւրոպացի դիպլօմատների ընդդիմադրութիւնը Սան-Ստեֆանօյի դաշնագրութեան և դրա տխուր հետևանքները, **Լ. Ս.**

18. ՎԻԿՏՕՐԻԱ ԹԱԳՈՒՀԻՆ, Ա. Մ. 19. ՆԱՄԱԿՆԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ, *Նամակ Բերլինից*, Ե. Թոփչեանի. 20. ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Յ. Քոչարեանի. 21. ՎՐԱՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ, Տ. Փիրումեանի. 22. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ 23. ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. 24. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. 25. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 26. ՅԱՒԵԼՈՒԱԾ. «ՅԱՐՈՒԹԻՒՆ», *վէպ* Լ. Տօլստօյի, *թարգմ.* Տ. Յովհաննիսեանի:

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆՈՒՄ

Կիրակի, մարտի 18-ին,

Բագուի հայ դերասանական ընկերութիւնը

կը ներկայացնէ

I

ԱՐՋ

Վօղըվիլ 1 արարուածով Չեխօվի:

II

ԽԱՆՈՒՄ

Կոմ. 3 արար. թարգմ. Արաքսեանի:

Սկիզբն է 8 ժամին:

Տեղերի գինն է **2** րուբլից մինչև **50** կոպ.:

Տոմսակները վաճառվում են ժողովարանի չվէյցարի մօտ: 1—1

Մարտի 21-ին 1901 թւին, Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձութեան խորհրդարանում լինելու է աճուրդ կապալով տալու հանգուցեալ Թագուհի Փանոսեանցի տան կէս մասը, որ նա ընծայել է դպրոցին, իսկ միւս կէս մասը պատկանում է Թիֆլիսի քաղաքացի Միքայէլ Պավլովիչ Իվանովին: Այդ տունը գտնվում է 7-րդ քաղաքամասում Կախետինսկայա հրապարակի արևմտեան կողմը Վիննի պօղիօմ փողոցի վրա № 44: Դպրոցական մասը բերում է տարեկան 750 րուբլի: Պայմանաթուղթը կարելի է տեսնել հոգաբարձութեան դիւանատանը, ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերից, ցերեկվայ 10—1 ժամը: 1—2

Մարտի 21-ին 1901 թւի, Ներսիսեան հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձութեան խորհրդարանում լինելու է աճուրդ կապալով տալու դըպրոցապատկան 5 կրպակները իրանց նկուղով, որ կտակել է դպրոցին հանգուցեալ Թագուհի Փանոսեանցը. այդ կրպակները գտնվում են Կախետինսկայա հրապարակի հիւսիս արևմտեան անկիւնում Լազարեվսկայա փողոցում № 12, եւ բերում են տարեկան 696 ր. եկամուտ: Պայմանաթուղթը կարելի է տեսնել հոգաբարձութեան դիւանատանը ամենայն օր բացի կիրակի եւ տօն օրերից ցերեկվայ 10—1 ժամը: 1—2



Р. К. и К°
ЗАЯВЛЕН. ДЕП. КЛЕЙМО ТОРГ. и МАНУФ.

ФАБРИЧНО-ТОРГОВОЕ ТОВАРИЩЕСТВО

Р. КЁЛЕРЪ и К°

ВЪ МОСКВѢ, ИЛЬИНКА, СРЕДНІЕ ТОРГ. РЯДЫ.

ОТДѢЛЕНІЯ: ВЪ С.ПЕТЕРБУРГѢ, САРАТОВѢ, ВЛАДИВОСТОКѢ И НИЖЕГОРОДСКОЙ ЯРМАРКѢ.

КЁЛЕРСКАЯ ГИБКАЯ

Кожевенная Аппретура.

Отличное средство для приданія кожѣ черного прочнаго глянца и непромокаемости.

Незамѣнима для дамской обуви, ТАКЪ КАКЪ НЕ ПАЧКАЕТЪ ПЛАТЬЯ.

Превосходно обновляетъ и сберегаетъ всякія кожаныя издѣлія: портмонэ, сакъ-вояжи, кожаные предметы **военной аммуниціи,** конскую сбрую, экипажи и проч.

ЦѢНА КРАЙНЕ ДЕШЕВАЯ.

МАСЛО И ПОРОШОКЪ

ФАБРИКИ Т-ва Р. КЁЛЕРЪ и К°

ДЛЯ ЧИСТКИ МѢДНЫХЪ ВЕЩЕЙ.

Вычищенныя масломъ и порошкомъ этой ФАБРИКИ мѣдныя вещи получаютъ такую полировку и блескъ, какихъ не имѣли и будучи новыми. Слѣдуетъ, однако, при покупкѣ остерегаться подобныхъ произведеній иного происхожденія, такъ какъ употребленіе недоброкачественнаго масла и, главное, самораспавшейся на сыромъ воздухѣ вѣнской извести (т. е. не ТОЛЧЕНОЙ въ ПОРОШОКЪ) слишкомъ заманчиво по выгодности и практикуется весьма часто, тогда какъ извѣстно, что ИЗМѢНИВШАЯСЯ ТАКИМЪ ОБРАЗОМЪ ИЗВЕСТЬ СОВЕРШЕННО УТРАЧИВАЕТЪ СВОЕ ДѢЙСТВІЕ.

„СПОКОЙНОЙ НОЧИ“

ИСКЛЮЧИТЕЛЬНАГО ДОСТОИНСТВА

ПОРОШОКЪ ОТЪ НАСѢКОМЫХЪ.

Вполнѣ оправдываетъ свое названіе, доставляя возможность „спокойной ночи“ даже тогда, когда всѣ другія подобныя средства оказывались недѣйствительными.

*Отъ клоповъ и тараканов*ъ

ЖИДКОСТЬ ФАБР. Т-ВА Р. КЁЛЕРЪ и К°.

Помазываніе кисточкой, а лучше пульверизація этой жидкостью вездѣ, гдѣ водятся эти паразиты, немедленно уничтожаетъ ихъ совсѣмъ, съ гнѣздами и яичками, такъ что насѣкомыя уже долго вновь въ этихъ мѣстахъ не заводятся.

САПОЖНЫЙ КРЕМЪ *РАЗНЫХЪ ЦВѢТОВЪ*

„ГЕЛІОСЪ“

ПРОСТОТА УПОТРЕБЛЕНІЯ, ЭКОНОМІЯ, ОПРЯТНОСТЬ, ИЗЯЩЕСТВО

НЕЗАМѢНИМЪ ДЛЯ ЭЛЕГАНТ. ОБУВИ.

ВЪ ПРОДАЖѢ ВЕЗДѢ у ВСѢХЪ БОЛѢЕ ИЗВѢСТНЫХЪ ТОРГОВЦЕВЪ.

КЁЛЕРСКІЙ *Глянцъ-Крахмалъ*

какъ въ СУХОМЪ, такъ и въ ГОТОВОМЪ для наведенія глянца жидкомъ видѣ; а также

КЁЛЕРСКАЯ СИНЬКА ДЛЯ БѢЛЬЯ

ПО ТОНКОСТИ И СПОРОСТИ *превосходятъ всѣ иностранныя произведенія этого рода.*

ВЫСШАЯ НАГРАДА GRAND PRIX НА ПАРИЖСКОЙ ВЫСТАВКѢ 1900 г.

Дозволено цензурою, Тифлисъ, 17 Марта 1901 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27